

citizenship of the Republic of Armenia, inadequate absence, prison sentence, legal incapacity, resignation from office, case of death.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼԻՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Իրավունքի փիլիսոփայությունը համալիր փիլիսոփայական և իրավաբանական գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի հասկացությունը և էությունը, իրավունքի արժեքը, դերն ու նշանակությունը մարդու, հասարակության և պետության կյանքում:

Իրավունքի փիլիսոփայությունը կազմում է պետության և իրավունքի տեսության և ընդհանրապես ողջ իրավագիտության հիմքը: Իր հերթին իրավագիտությունն է նպաստում իրավափիլիսոփայական հայացքների զարգացմանը:

Իրավունքի փիլիսոփայությունը միջանկյալ գիտություն է, գտնվում է փիլիսոփայության և իրավագիտության հատույթում և խնդիր ունի պատասխանելու հետևյալ հիմնական հարցին. «Ի՞նչ է իրավունքը»:

Իրավունքի փիլիսոփայությունը ընդհանուր փիլիսոփայության բաղկացուցիչ մասն է, այնպես, ինչպես փիլիսոփայության բաղադրիչներն են բնության փիլիսոփայությունը, մարդու փիլիսոփայությունը, կյանքի փիլիսոփայությունը, կրոնի փիլիսոփայությունը, պատմության փիլիսոփայությունը, բարոյականության փիլիսոփայությունը, գիտության փիլիսոփայությունը և այլն¹:

Իրավունքի փիլիսոփայությունը հիմնարար գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի տեղն ու դերը աշխարհի մասին փիլիսոփայական ուսմունքի համատեքստում, սոցիալական կյանքի կազմակերպման ձևերն ու կառուցակարգերը, հասարակության արժեքնորմատիվային համակարգը, իրավունքի էությունը, իրավունքի հետազոտման մեթոդաբանությունը, իրավագիտական հասկացությունները, իրավունքի համակարգի կատարելագործման ուղիները, իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացները, իրավագիտակցությունը, իրավունքի և օրենքի, ազատության և պատասխանատվության, լիազորության և պարտականության հարաբերակցությունը և այլ կարևոր հիմնախնդիրներ: Ինչպես նշում է Վ. Ներսեսյանցը, իրավունքի փիլիսոփայությունը հետազոտում է իրավունքի դերակատարությունը ժողովուրդների և մարդկության ճակատագրում²:

Իրավունքի փիլիսոփայության ուսումնասիրման առարկան «իրավունքի աշ-

¹ Տե՛ս *Нерсесянц В. С.* Философия права, Учебник для ВУЗов, М., 2003, էջ 15:

² Տե՛ս *Нерсесянц В. С.* Նշվ. աշխ., էջ 7:

խարհն» է՝ իր համընդհանրության և ամբողջականության մեջ, իրավական իրականությունը կազմող բոլոր իրավական ինստիտուտները, դրանց իմաստային բովանդակությունը³:

Իրավունքի փիլիսոփայությունը փոխկապված է իրավունքի սոցիոլոգիայի, պետության և իրավունքի տեսության ու պատմության, քաղաքական և իրավական ուսմունքների պատմության և մյուս իրավաբանական գիտությունների հետ:

Թեև իրավափիլիսոփայական հիմնախնդիրները հետազոտվել են աստվածաբանության (թեոլոգիայի), քաղաքագիտության և այլ գիտությունների շրջանակներում, սակայն գիտական խորը ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել իրավունքի փիլիսոփայության կողմից:

Իրավունքի փիլիսոփայությունը սաղմնավորվել է դեռևս Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում, որպես ինքնուրույն գիտություն ձևավորվել Արևմտյան Եվրոպայում XVII-XVIII դարերում, ապա զարգացում ապրել XX դարի երկրորդ կեսից:

«Իրավունքի փիլիսոփայություն» հասկացությունն առաջացել է համեմատաբար ուշ՝ XVIII դարի վերջին⁴:

Հասկացության հեղինակ է համարվում գերմանացի իրավաբան Գ. Յուլզոն, ով գրել է պոզիտիվ իրավունքի փիլիսոփայության մասին և փորձել է մշակել «իրավունքի մասին ուսմունքի փիլիսոփայական մասը»⁵: Յուլզոն կրել է էմանուել Կանտի ազդեցությունը, ով իրավունքի փիլիսոփայությունը ներկայացրել է որպես իրավունքի մասին մետաֆիզիկական ուսմունք:

«Իրավունքի փիլիսոփայություն» տերմինը լայնորեն տարածում գտավ և մեկընդմիջտ մտավ գիտական շրջանառության մեջ՝ կապված Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Յեզեի 1820 թվականին լույս տեսած «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատության հետ, որն իր նշանակությունը պահպանել է նաև մեր օրերում: Յեզեի հայտնի աշխատության ամբողջական անվանումն է «Բնական իրավունք և ակնարկներ պետության մասին ուսմունքի վերաբերյալ: Իրավունքի փիլիսոփայության հիմունքներ»⁶: Իրավունքի փիլիսոփայության հիմքերի մասին Յեզեի հայացքներն առավել ամբողջական և համակարգված ձևով շարադրված են նրա «Իրավունքի փիլիսոփայության» մեջ, սակայն իրավունքի փիլիսոփայական հիմնախնդիրներին Յեզեն անդրադարձել է «Գերմանիայի Սահմանադրությունը» (1798-1803թթ.), «Բնական իրավունքի հետազոտման եղանակների, գործնական փիլիսոփայության մեջ դրա տեղի և պոզիտիվ իրավունքի վերաբերյալ գիտության նկատմամբ վերաբերմունքի մասին» (1802-1803թթ.), «1831թ. Բարեփոխման մասին անգլիական բիլը» և այլ աշխատություններում:

³ Տե՛ս *Философия права*, Учебник, О. Г. Даниелян, Л. Д. Байрачная, С. И. Максимов и др., Под ред. О. Г. Даниеляна, М., 2005, էջ 17:

⁴ Տե՛ս *Нерсисянц В. С.* Նշվ. աշխ., էջ 11:

⁵ Տե՛ս *Hugo G.* Beiträge zur civilistischen Bucherkenntnis. Bd.I, Berlin, 1829.S. 372 (I Ausgabe – 1788):

⁶ Տե՛ս *Гегель Г. В. Ф.* *Философия права*, Пер. с нем., ред. и сост. Д. А. Керимов, В. С. Нерсисянц, М., 1990, էջ 250:

Ըստ Չեզելի՝ իրավունքի մասին ճշմարիտ գիտությունը իրավունքի փիլիսոփայությունն է, որը փիլիսոփայական գիտություն է և ոչ թե իրավաբանական գիտություն, ինչպես կարծում էր Յուզոն: Չեզելյան սահմանմամբ՝ «իրավունքի մասին գիտությունը փիլիսոփայության մասն է»⁷, այսինքն՝ իրավունքի փիլիսոփայությունն ընդհանուր փիլիսոփայության բաղադրիչն է, որի ուսումնասիրման առարկան հենց իրավունքի գաղափարն է, իրավունքի հասկացությունը և նրա իրականացումը, իրավունքի փիլիսոփայական ըմբռնումը: Չեզելը գրում է, որ «իրավունքի մեջ մարդը պետք է գտնի բանականություն, հետևաբար պետք է պարզի իրավունքի խելամտությունը, բանականությունը»⁸: Ըստ նրա՝ իրավունքի փիլիսոփայության խնդիրն է ըմբռնել այն, թե ինչ է իրավունքը:

Իրավունքի փիլիսոփայությունն, ըստ Չեզելի, օբյեկտիվ ոգու փիլիսոփայություն է (ինչպես և բարոյականության փիլիսոփայությունը) և ներառում է հասարակական կեցության բնագավառը՝ ի տարբերություն սուբյեկտիվ ոգու փիլիսոփայության (մարդաբանության, ֆենոմենոլոգիայի, հոգեբանության): Չեզելը մեծ ներդրում ունի ազատության և իրավունքի հայեցակարգի փիլիսոփայական հիմնավորման գործում:

Ի տարբերություն Կանտի, ով անձի ազատությանը, մարդու իրավունքներին, իրավական պետությանը, քաղաքացիական հասարակությանը հաղորդել է անհրաժեշտության (պարտադրականության) ձև, Չեզելը դրանք դիտել է իբրև իրականություն, այսինքն՝ գործնական իրողություն, բանականության դրսևորում պետաիրավական իրական ձևերում, մարդկանց առկա կեցության մեջ: Չեզելը վերլուծել է օբյեկտիվորեն ազատ ոգու դրսևորման ձևերը՝ իբրև «իրավունք» հասկացության մարմնավորում իրականության մեջ, ինչն էլ հենց գաղափարն է: Ուստի, իրավունքի փիլիսոփայության՝ որպես գիտության օբյեկտը իրավունքի գաղափարն է, որը «իրավունք» հասկացության և դրա իրացման միասնությունն է: Իսկ իրավունքի գաղափարը հենց ազատությունն է: Ըստ Չեզելի՝ օբյեկտիվ ոգու ոլորտը իդեալական իրավական իրականությունն է՝ իրավունքի և ազատության ձևերի օբյեկտիվացումը: Չեզելի իրավունքի փիլիսոփայության իրավաքաղաքական բովանդակության կառուցվածքում հետազոտողներն առանձնացնում են երկու բաղադրիչ՝

ա) կոնկրետ-պատմական՝ պատմականորեն կոնկրետ քաղաքական և իրավական հայացքներ,

բ) տեսական՝ քաղաքական առումով նշանակալի հայեցակարգային դրույթների ամբողջություն:

Չեզելի ուսմունքում երկու բաղադրիչները հանդես են գալիս ականառաձայնականությամբ, այսինքն՝ դիալեկտիկայի հասկացությամբ ապարատի կիրառումը նույնական է որոշակի սոցիալական և իրավաքաղաքական դիրքորոշման արտահայտմանն ու զարգացմանը: Ըստ Չեզելի՝ փիլիսոփայության խնդիրն է առհասարակ ճանաչել այն, ինչ գոյություն ունի, քանզի այն, ինչ գոյություն ունի, բանականությունն է: Համապատասխանաբար, իրավունքի փիլիսոփայության խնդիրն է՝ «ճանաչել և ներկայացնել պետությունը իբրև իր մեջ բանական

⁷ Տե՛ս *Гегель Г. В. Ф.* Նշվ. աշխ., էջ 59:

⁸ Տե՛ս *Гегель Г. В. Ф.* Նշվ. աշխ., էջ 55:

ինչ-որ բան, իսկ իրավունքի փիլիսոփայության նպատակն է սոսկ ցույց տալ, թե ինչպես պետությունը, այդ բարոյական համապարփակ կառույցը պետք է ճանաչվի»: «Իրավունք» հասկացությունը Յեզեյը կիրառում է երեք հիմնական նշանակությամբ՝

1. իրավունքն իբրև ազատություն («իրավունքի գաղափար»),

2. իրավունքը որպես ազատության որոշակի աստիճան և ձև («հատուկ իրավունք»),

3. իրավունքը իբրև օրենք («պոզիտիվ իրավունք»):

Օբյեկտիվ իրավունքի աստիճանում, որտեղ ամբողջ զարգացումը որոշվում է ազատության գաղափարով, «ազատությունը» և «իրավունքը» արտահայտում են միասնական իմաստ: Այս առումով Յեզեյի իրավունքի փիլիսոփայությունը կարող է կոչվել նաև «ազատության փիլիսոփայություն»: Իրավունքի համակարգը՝ որպես «իրականացված ազատության թագավորություն», հատուկ իրավունքների աստիճանակարգ է (վերացական ձևերից մինչև կոնկրետ ձևերը): Այս աստիճանակարգի վերին մասում զետեղված է պետությունը, որից բարձր է միայն համաշխարհային ոգու իրավունքը: Իրավունքը որպես օրենք (պոզիտիվ իրավունք) հատուկ իրավունքներից է: Օրենսդրության առարկան միայն մարդկային հարաբերությունների արտաքին կողմերն են և ոչ դրանց ներքին ոլորտը: Տարբերակելով իրավունքն ու օրենքը՝ Յեզեյը բացառում է դրանց հակադրումը: Սակայն օրենսդրության մեջ իրավունքի բովանդակությունը կարող է խեղաթյուրվել, ուստի օրենքի տեսքով տրված ամեն ինչ չէ, որ իրավունք է: Պոզիտիվ իրավունքը՝ իբրև «իրավունք» հասկացության աստիճան, բանական է: Օրենքը (ըստ հասկացության) իրավունքի արտահայտման կոնկրետ ձևն է: Միաժամանակ, Յեզեյը մերժում է հակաիրավական օրենքը, հակաիրավական օրենսդրությունը, այսինքն՝ այն պոզիտիվ իրավունքը, որը չի համապատասխանում «իրավունք» հասկացությանն առհասարակ: Յեզեյը, ինչպես և Շառլ Լուի Մոնտեսքիոն, ենթադրում է, որ պոզիտիվ իրավունքում արտացոլվում են կոնկրետ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, նրա պատմական զարգացման որոշակի աստիճանը, ազգային կեցության բնական պայմանները և այլ գործոններ: Համաշխարհային պատմական շարժընթացը Յեզեյը համարում է բանականության տիրապետման ոլորտ: Դա նշանակում է, որ Ոգու վերընթաց զարգացման որոշիչ սկիզբը և վերջնական նպատակն ազատությունն է: Այս իմաստով՝ համաշխարհային պատմությունը հանդես է գալիս որպես առաջադիմություն, պետաիրավական ձևերում օբյեկտիվացված ազատության ճանաչման և ազատության նվաճված աստիճանների առաջընթաց շարժում: Մարդու ազատությունը Յեզեյը համարում է Ոգու գործունեության արդյունք: Համաշխարհային պատմության հոգևոր գործունեությունը ծավալվում է Արևելքից Արևմուտք, որի ընթացքում տեղի է ունենում իսկական ազատ վիճակի ձեռքբերում: Դա նշանակում է միաժամանակ ամբողջի և ամբողջը կազմող անհատների ազատություն: Յեզեյի գնահատմամբ՝ Արևելքում ազատ է լույս մեկ մարդ՝ տիրակալը, հունահռոմեական աշխարհում՝ միայն մի քանիսը, մնացած բոլորի ստրկության պահպանմամբ, գերմանական աշխարհում, որը նա նույնացնում է Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների հետ, ազատ են բոլորը: Դրան համապատասխան մեծ փիլիսոփան առանձնացնում է պետության երեք հիմնական ձև՝ արևելյան բռնապե-

տություն, անտիկ պետություն՝ ժողովրդավարության կամ ազնվապետության (արիստոկրատիայի) ձևով և սահմանադրական միապետություն: Ազատության գաղափարը, ըստ Չեզեյի, լիակատար իրականացվում է սոսկ սահմանադրորեն ձևավորված և զարգացած պետություններում: Ազատության հասկացությունն օբյեկտիվանում է առկա աշխարհում՝ ընտանիքի, քաղաքացիական հասարակության և պետության ձևով⁹:

Իհարկե, յուրաքանչյուր խոշոր մտածող «իրավունքի փիլիսոփայության» իր ըմբռնումն է առաջարկել: Բացի հեգելյան ուսմունքից, XIX-XX դարերի իրավունքի փիլիսոփայության հիմնական ուղղություններն են էմանուել Կանտի ուսմունքը, նորկանտականությունը (նեոկանտիզմ), նորհեգելականությունը (նեոհեգելիզմ), քրիստոնեական փիլիսոփայական մտքի տարբեր ուղղությունները՝ նորթոմականությունը (նեոթոմիզմ), նորբողոքականությունը (նեոպրոտեստանտիզմ), ինտուիտիվիզմը, էկզիստենցիալիզմը, փիլիսոփայական մարդաբանությունը (անթրոպոլոգիան), ֆեմինիստիկան և այլն¹⁰:

Իրավունքի փիլիսոփայությունն իրավունքն ուսումնասիրում է բազմակողմանիորեն՝ որպես ազատություն, արդարություն, որպես ձևական հավասարություն, բոլորի համար հավասար մասշտաբ, հասարակական հարաբերությունների համապարտադիր կարգավորիչ, բոլոր անձանց կողմից ընդունելի վարքագծի չափ:

Անձը՝ որպես բանական էակ, պոզիտիվ իրավունքի իշխանական-պաշտոնական բնույթը ընդունում է և, միաժամանակ, անցկացնում իր գիտակցության, հայացքների, պատկերացումների միջով, տալիս փիլիսոփայական հարցեր իրավունքի արդարացիության, ճշմարտացիության, օբյեկտիվության վերաբերյալ: Բանականության նպատակը ճշմարտության հայտնաբերումն է, սոցիալական գործընթացների ու եղելությունների և դրանց իրավաբանական գնահատականի ու որակումների տարբերությունների և առնչությունների բացահայտումը: Իրավունքի փիլիսոփայությունը իրավունքը քննարկում է որպես վերացարկում (աբստրակցիա), ինչը տեղի է ունենում այն տարբերությունների գիտակցված (մտավոր) վերացարկման արդյունքում, որոնք բնորոշ են հավասարեցվող օբյեկտներին: Հավասարեցումը ենթադրում է հավասարեցվող օբյեկտների ոչ էական տարբերություններ և, միաժամանակ, համապատասխան չափանիշով կամ հիմքով դրանց հավասարակշռման հնարավորություն: Հավասարեցվող օբյեկտների բովանդակային տարբերությունները կարող են լինել անհատական, տեսակային, սեռային: Իրավական հավասարեցման սկզբունքը նշանակում է հիմք ընդունել տարբեր մարդկանց համար ընդհանուր անհատական ազատության և հասարակական հարաբերություններում իրավահավասարության սկզբունքները, որոնք արտահայտվում են անձանց իրավագիտակցության, իրավունակության և գործունակության ձևով: Իրավունքը՝ որպես ձևական հավասարություն, նշանակում է բոլորի համար ազատության հավասար չափ, ինչպես նաև անհատների՝ որպես իրավունքի սուբյեկտների միջև հարաբերություններում համաչափության և համարժեքության պահանջ: Իրավական հավասարությունը

⁹ Տե՛ս www.agoraarmenia.blogspot.com

¹⁰ Տե՛ս *Нерсисян В. С.* Նշվ. աշխ., էջ 14:

նշանակում է ազատ և միմյանցից անկախ սուբյեկտներին հավասար վարքագծի կանոնների առաջադրում, բոլորի համդեպ ընդհանուր մասշտաբների կիրառում, միասնական չափանիշների և միանման նորմերի գործադրում: Այնտեղ, որտեղ մարդիկ բաժանվում են ազատների և կախյալների, վերջիններս դասվում են ոչ թե իրավունքի սուբյեկտների, այլ օբյեկտների կատեգորիային և նրանց վրա չի տարածվում իրավահավասարության սկզբունքը:

Իրավունքը մարդկային համակեցության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է, հասարակության մեջ ազատության արտահայտությունը և իրականացումը: Այս առումով, ինչպես նշում է Վ. Ս. Ներսիսյանը, «իրավունքը ազատության մաթեմատիկան է»¹¹: Իրավունքը սահմանված է որպես ձևական հավասարություն, հասարակական հարաբերություններում մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև, արդարություն:

Սուկրատեսը, Պլատոնը և Արիստոտելը հավասարությունը սահմանել են որպես իրավունքի և արդարության սկզբունք՝ տարբերակելով հավասարության երկու տեսակ՝ մաթեմատիկական հավասարություն (կշռի, չափի, թվի հավասարություն) և երկրաչափական հավասարություն (հավասար երկրաչափական համաչափություններով)¹²: Սոցիալական ոլորտում հավասարությունը միշտ դրսևորվում է իրավահավասարության ձևով՝ որպես ձևական-իրավական հավասարություն: Իրավահավասարությունը, ինչպես և ցանկացած հավասարություն, վերացարկված է փաստացի տարբերություններից և այդ պատճառով կրում է ձևական բնույթ: Հավասարությունը ունի ռացիոնալ բնույթ և գործնականում, սոցիալական կյանքում, իրական աշխարհում հնարավոր է ոչ թե որպես փաստացի հավասարություն կամ բացարձակ հավասարություն, այլ միայն իրավական հավասարություն: Փաստացի հավասարությունը ռացիոնալ մեծություն է: Հավասարությունը հասկացություն է, կարգավորիչ սկզբունք, չափի մասշտաբ է, հարաբերությունների ձև և տեսակ է: Իրավունքը հասարակական հարաբերությունների կարգավորման ձև է՝ հավասարության սկզբունքով, որը չի վերացնում սուբյեկտների միջև առկա տարբերությունները: Իրավունքը ազատության դրսևորման նորմատիվ ձև է՝ հասարակական հարաբերություններում մարդկանց ձևական հավասարության սկզբունքով:

Սուբյեկտների իրավահավասարությունը նշանակում է օրենքի առջև բոլորի հավասարություն, նրանց հավասար իրավունակություն, բոլորի համար հավասար իրավական հնարավորություններ: Բոլոր սուբյեկտներն անկախ են, իրավահավասար, ազատ, սակայն բոլորը ենթարկվում են ընդհանուր կանոններին, համակեցության համապարտադիր նորմերին, այսինքն՝ իրավունքին: Իրավունքը ազատության համընդհանուր և հավասար չափ է: Իրավունքը ազատության հավասար մասշտաբ է բոլոր սուբյեկտների համար՝ անկախ նրանց սոցիալական, մտավոր, գույքային և այլ վիճակներից: Իրավունքը մարդկանց ազատ կամքի ընդունելի ձև է: Իրավունքը սահմանելիս՝ հաճախ են ելնում «կամք» հասկացությունից: Իրավունքը սահմանվում է որպես «ընդհանուր կամքի արտահայտություն» (Ռուսո), «պետական կամք», «կամային նորմեր» (Արիստոտել,

¹¹ Տե՛ս *Нерсисян В. С.* Право-математика свободы, М., 1996:

¹² Տե՛ս *Нерсисян В. С.* Философия права, էջ 18:

Հորացիոս), «դասակարգի կամք՝ բարձրացված օրենքի աստիճան» (Մարքս, Լենին)¹³ և այլն:

Շառլ Լուի Սոնտեսքիոն «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ գրում է, որ «Չկա ուրիշ հասկացություն, որը ստանա առավել բազմանշանակ իմաստ և նշանակություն ու թողնի այդչափ տարբեր ազդեցություն մարդկանց վրա, որքան «ազատությունը»»¹⁴:

Ազատությունը դրսևորվում է իրավունքի միջոցով՝ որպես իրավական հնարավորություն, այսինքն՝ այն, ինչ թույլատրված է, որպես իրավակարգ, լիազորություն և արգելքներ, պատասխանատվություն իրավախախտման համար և այլն: Իրավունքի ազատական (լիբերտար) տեսության համաձայն՝ իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձև է, իսկ ազատությունը սոցիալական կյանքում հնարավոր և իրական է միայն իրավունքի ձևով: Իրավունքի լեգիտական ուսմունքի համաձայն՝ իրավունքը օրենքն է (պոզիտիվ իրավունքը), գրի առնված, պաշտոնապես ձևակերպված, պետաիշխանական կամքով ընդունված և պետաիրավական հարկադրանքով ապահովվող օրենքն է: Սակայն իրավունքը ոչ թե ցանկացած օրենքն է, այլ իրավական օրենքը: Ոչ իրավական ազատությունը, ազատությունն առանց համընդհանուր մասշտաբի և միասնական չափի, արդեն կամայականություն է, բռնություն, բռնապետություն, մի կողմից և ճնշում, իրավազրկություն՝ մյուս կողմից:

Իրավունքի փիլիսոփայությունն իրավունքը սահմանում է ոչ միայն որպես ձևական հավասարություն և ազատություն, այլև որպես արդարություն: Իրավունքի նպատակը սոցիալական արդարության և իրավահավասարության հաստատումն է, արդարադատության պատշաճ իրականացումը, ուստի ինքը՝ իրավունքը պետք է արդարացի լինի: Արդարությունը իրավունքի համընդհանուր սկզբունք է:

Իրավունքի փիլիսոփայությունը իրավունքն ուսումնասիրում է որպես արժեք: Էմանուել Կանտը արժեք է համարում բարոյական պատշաճ իմպերատիվները: Կանտը գտնում է, որ արժեքներն ունեն նորմատիվ և կարգավորիչ (ռեգուլատիվ) նշանակություն և իրենցից ներկայացնում են բանականության ապրիորի (փորձից անկախ) իմպերատիվներ՝ նպատակներ, պահանջներ, բանաձևեր, հրամայականներ¹⁵: Իրավական արժեքանությունն արժեք է համարում նաև պետությունը՝ որպես հասարակության ազատ անդամների հրապարակային իշխանության կազմակերպման իրավական ձև: Իսկ իրավունքն արժեք է իր ներուժով, իր սահմանիչ, կարգավորիչ, ուղղորդող, պահպանիչ, պաշտպանիչ, դաստիարակիչ նշանակությամբ, իր ազատության և արդարության սկզբունքներով: Իրավունքի փիլիսոփայությունը բնական իրավունքը գնահատում է որպես ընդհանուր բարիք (Donum commune): Ընդհանուր բարիքի հասկացությանն անդրադարձել են հույն փիլիսոփաներ Դեմոկրիտը, Պլատոնը, Արիստոտելը, ինչպես նաև հռոմեացի փիլիսոփաներ Սենեկան, Ցիցերոնը, հռոմեացի իրավաբանները,

¹³ Տե՛ս *Нерсисян В. С.* Философия права // էջ 23:

¹⁴ Տե՛ս *Монтескье Ш. Л.* О духе законов // Избранные произведения, М., Политиздат, 1955, էջ 288:

¹⁵ Տե՛ս *Кант И.* Метафизика нравов, Соч. в 8 т., т. 6, М., 1994, 543 էջ:

միջնադարում՝ Թովմա Աբվինացին, այնուհետև՝ Հորացիոսը և այլք։ Իրավունքը իմացաբանական (գնոսեոլոգիական) առումով ընդունվում է որպես ընդհանուր և անհատական բարիքների համատեղման, հաշտեցման և ապահովման կարգ։ Է. Կանտը, Հեգելը, այնուհետև նրանց հետևորդներ Վ. Ս. Սոլովյովը, Ռ. Մարչիչը իրավունքը համարում էին «բարոյական միմիում» (բարոյական նվազագույն պահանջներ), բարոյական կատեգորիկ իմպերատիվ¹⁶։

Իրավունքը հասարակական հարաբերությունները կարգավորում է տարբեր սոցիալական կարգավորիչների՝ կրոնական, բարոյական, քաղաքական, գեղագիտական, էթնիկական, տեխնիկական և այլ նորմերի հետ միասին։ Հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը տեղի է ունենում թույլտվությունների, պարտադրանքների և արգելքների միջոցով՝ հետևյալ սկզբունքով. «Թույլատրված է այն ամենը, ինչն ուղղակի արգելված չէ օրենքով»։

Այսպիսով, իրավունքի փիլիսոփայությունը համալիր գիտություն է, որի ուսումնասիրման առարկան իրավունքի էությունն է, իրավունքի հասկացությունը և նշանակությունը, արժեքը մարդկային քաղաքակրթության համար, իսկ խնդիրը՝ իրավունքի փիլիսոփայական իմաստավորումն է։

ФИЛОСОФИЯ ПРАВА КАК КОМПЛЕКСНАЯ НАУКА

Р. Х. АКОПЯН

Статья посвящена философии права, как комплексной науке, сформировавшейся на стыке философских и юридических наук. Философия права исследует понятие и сущность права, его ценность и значимость, его роль в жизни человека, общества и государства.

Философия права - особая философская наука наряду с такими особыми философскими учениями, как философия природы, философия человека, философия религии, философия морали, философия науки, философия истории и т. д. Одновременно философия права - юридическая наука, имеющая своим предметом идею права как формального равенства, свободы, справедливости.

Хотя философия права имеет давнюю и богатую историю, однако сам термин "философия права" возник сравнительно поздно, в конце XVIII века.

Широкое распространение термина "философия права" связано с гегелевской "Философией права", значимость и актуальность которой сохранились до наших дней.

LAW PHILOSOPHY AS A COMPLEX SCIENCE

R. KH. HAKOBYAN

The article is devoted to Law Philosophy which is a complex science, being a synthesis of Philosophy and Law. Law Philosophy studies the concept and essence of law, its role in the life of a person, society and state.

Law Philosophy is a special philosophical science like Nature Philosophy, Human Philosophy, Religion Philosophy, Moral Philosophy, Science Philosophy, History Philosophy and so on.

Mean while, Law Philosophy is a legal science that studies law as a formal equality, freedom and justice.

Though Law Philosophy has an old and rich history, the term 'law philosophy' emerged relatively

¹⁶ Տե՛ս *Нерсисян В. С.* Философия права, էջ 56։

later, at the end of the XVIII century. The term 'Law Philosophy' especially extended connected with Hegel's 'Philosophy of Law', the significance and contemporaneity of which have been preserved up to these days.

ՎԻԺԵԼՈՒ ԵՎ ՆՈՐԱԾՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑՆ ԸՍՏ «ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԻ»

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

«Հաճախապատում ճառքի» մեջ տեղ գտած բազմաթիվ այլ նորմերի կողքին, «Ը» ճառի 25 տանն առկա է հետաքրքիր կառուցվածք ունեցող հանցակազմ պարունակող նորմ: Այն ունի հետևյալ տեսքը. «Կէսք յորովայնի ճմլեն եւ տարաժամ անցուցանեն զմանկունս, եւ կամ դեղովք ապականեն յորովայնի. եւ է որ զծնեալսն սպանանեն»¹: Առաջին հայացքից թվում է, թե այն կրոնական քարոզչի կողմից պատահականորեն արված բարոյախոսական դիտողություն է: Իրականում այն զրադաշտական իրավական նորմ է, ինչպես այնտեղ իրենց արտացոլումը գտած շատ այլ նորմեր ու նորմատիվ գաղափարներ, իսկ «Հաճախապատում ճառքն» էլ իրենից ներկայացնում է իրավաբանական տրակտատ, որն ունի բացառիկ գիտական և պատմական նշանակություն: Այն զրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուր է, որում առկա են զրադաշտականից ռեցեպցիայի ենթարկված և քրիստոնեացված բազմաթիվ նորմեր, և, փաստորեն, այն նոր քրիստոնեական պետության, եկեղեցու ու դրա օրենսդրության ստեղծման գաղափարաբանական հիմքն ու հիմնավորումն է:

Աշխարհում առաջինը Սպիտակ Սպիտամա Զորոաստրն է (Զրադաշտ), որը պլանավորված կերպով ստեղծել է իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական, տնտեսական և էսթետիկական գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմներ (համակարգեր), քարոզել, տարածել դրանց գաղափարները, նորմերն ու հավատալիքները: Նա հենց ինքն էլ դրանց հիման վրա ծրագրված կերպով ստեղծել է պետություն՝ Իրանական-արիական ֆեդերացիան, որի կազմավորող հիմքերից մեկը և սուբյեկտը Հայաստանն էր: Այն միակ պետություն-աշխարհակալությունն էր, որն ավելի կենսունակ էր, քան Հռոմեական պետությունը, և ոչ միայն կարողացավ հաջողությամբ դիմակայել նրան, այլև դառնալ նրա քայքայման վկան:

Իսկ նրա կենսունակության պատճառն այն է, որ զրադաշտական պետականության և քաղաքակրթության հիմքը՝ Զորոաստրի ուսմունքը, գաղափարախո-

¹ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 46: